Գիտություն

ՀՈՒՆԻՍ
№ 6
(319)
2018 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ ● Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

Միջազգային գիտաժողով

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ–100»

Մայիսի 25-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունում մեկնարկեց «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-100» խորագրով միջազգային գիտաժողովը: Գիտաժողովը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Իր ելույթում նա մասնավորապես ասաց. «1918 թ. մայիսին Սարդարապատի, Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերի շնորհիվ հնարավոր եղավ խափանել հայ ժողովրդի վերջնական բնաջնջման թուրքական ծրագիրը և կյանքի կոչել Հայաստանի Հանրապետությանը: Հայաստանի առաջին Հանրապետությունը ծնվեց ծանր պայմաններում՝ 12 հազար քառակուսի կիլոմետրի վրա, որը, սակայն, աստիճանաբար ամրապնդվեց և ընդարձակվեց: …Պետականության մոտ երկուսուկես տարվա ընթացքում հայ ժողովուրդն ունեցավ լուրջ առաջընթաց: Երկարատև ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց պետականությունը, սկսվեց հայրենադարձություն, ստեղծվեցին իշխանության մարմիններ, բավականին ուժեղ բանակ, հաստատվեց ժամանակի համար կառավարման ժողովրդավարական համակարգ, մարդկանց մեջ ամրապնդվեց պետականության գիտակցությունն ու զգացողությունը: Թեև ընկավ հանրապետությունը, սակայն նրա գոյությունն անհետևանք չմնաց: Նրա հիմքի վրա բոլշևիկները պարտավորված ստեղծեցին նոր հանրապետություն՝ Խորհրդային Հայաստանը, որի շուրջ 70-ամյա պատմության ընթացքում հայ ժողովուրդն ապրեց տնտեսական ու մշակութային մեծ վերելք: Փաստորեն, Առաջին Հանրապետության հենքի վրա, թեև վարչաքաղաքական միանգամայն այլ համակարգի պայմաններում ստեղծված Խորհրդային Հայաստանն էլ հող նախապատրաստեց երրորդ անկախ Հանրապետության ձևավորման համար»,- իր ելույթում ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը: «Մեկ քառամյակ առաջ հայ ժողովուրդը երկարամյա ընդմիջումից հետո վերականգնեց իր պետականությունը, և այսօր արդեն մեր պատմական հայրենիքի մի անկյունում հայ ժողովուրդը շարունակում է ցույց տալ, որ կենսունակ է և հետագայում էլ պետք է շարունակի իր ընդլայնումը: Աշխարհասփյուռ հայության դեպի Հայաստան ներգաղթի ապահովումը մեզ համար պետք է դառնա առաջին քայլերից մեկը: Եվ մեր նորաստեղծ կառավարությունն այս կապակցությամբ պետք է գործադրի բոլոր ջանքերը, որպեսզի հայոց պետականությունը դառնա աշխարհասփյուռ հայության համար նոր ապագա կերտելու կարևոր հանգրվան: Սիրելի հայրենակիցներ, հայոց պետականության համար այս կարևոր փուլում շատ բարձր ենք գնահատում գիտությունների ազգային ակադեմիայում կազմակերպված այս միջոցառումը և, կարևորելով Սփյուռք-Արցախ-Հայաստան եռամիասնությունը, սիրով ուզում եմ մեր կառավարության անունից հայտնել, որ այսուհետ էլ մեր քայլերը պետք է միտված լինեն աշխարհասփյուռ հայության դեպի Հայաստան ներգրավմանը: Շնորհավորում եմ բոլորիս»,- իր ելույթում ասաց ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարը:

Արցախի Հանրապետության նախագահի մամուլի խոսնակ Դավիթ Բաբայանն ընթերցեց Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի ուղերձը: «1918 թ.-ին նոր էջ բացվեց հայ ժողովրդի պատմության մեջ: Այն մեծ խորհուրդ ունի: Տալիս է բազմաթիվ հարցերի պատասխաններ, հանդիսանում է ոգեշնչման ու հպարտության առիթ: Միևնույն ժամանակ այն պատգամ է հետագա սերունդներին՝ լինել միշտ միասնական ամենածանր պահերին, ամուր պահել հավատը սեփական ուժերի հանդեպ, գերագույն արժեք համարել հայրենիքին անմնացորդ նվիրումն ու ծառայությունը: Հենց նման արժեհամակարգը հնարավորություն տվեց ցեղասպանության ենթարկված մեր ժողովրդին տեր կանգնել իր ճակատագրին…»,- մասնավորապես նշված է Բակո Սահակյանի ուղերձում:

ՀՀ սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանի ուղերձը ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության Հայրենադարձության և հետազոտությունների վարչության պետ Գրիգոր Արշակյանը: «…Առաջին Հանրապետության տարիներին զգալիորեն ամրապնդվեց պետականության գիտակցությունն ու գաղափարը, որը հնարավոր դարձրեց ➢2

Հայաստանի և Ռուսաստանի գիտությունների ակադեմիաները ստորագրեցին համագործակցության նոր համաձայնագիր

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ալեքսանդր Սերգեևը մայիսի 29-ին Մոսկվայում ստորագրեցին համագործակցության զարգացման նոր համաձայնագիր: Համաձայնագիրը միտված է նպաստելու երկու երկրների գիտական հետազոտությունների հետագա զարգացմանը, ակադեմիական համայնքների ավանդական փոխշահավետ հարաբերությունների ամրապնդմանը:

Կողմերը գիտական և տեխնիկական համագործակցություն կիրականացնեն գիտության հետևյալ ճյուղերում.

- մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ,
- ֆիզիկա և աստղաֆիզիկա,
- բնական գիտություններ,
- քիմիական և կենսաբանական գիտություններ,
- հումանիտար գիտություններ:

«Մենք բարձր ենք գնահատում Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի դերը Հայաստանում գիտության զարգացման գործում: Մեր գրեթե բոլոր ինստիտուտները համագործակցում են Ռուսաստանի ակադեմիական ինստիտուտների հետ: Բացի այդ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հետ մենք համագործակցում ենք Միջպետական տնտեսական հանձնաժողովի շրջանակներում»,- հայտարարեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Ալեքսանդր Սերգեևը նշեց, որ շատ բարձր են գնահատում Հայաստանի գիտությունը, որ Հայաստանը Ռուսաստանի ռազմավարական գործընկերն է բոլոր ուղղություններով, այդ թվում՝ գիտության:

Հանդիպման ժամանակ Ռադիկ Մարտիրոսյանը բարձրացրեց կադրերի պատրաստման հարցը և առաջարկեց ՌԴ ԳԱ ապագա խոշոր գիտահետազոտական ծրագրերում ընդգրկել նաև հայ հետազոտողների: ՌԴ ԳԱ նախագահը խոստացավ աջակցել բարձրացված հարցերի կարգավորման գործում:

Մոսկվայում Ռադիկ Մարտիրոսյանն այցելեց ՌԴ ԳԱ ընդհանուր ֆիզիկայի և տիեզերական հետազոտությունների ինստիտուտներ, որոնք Հայաստանում համագործակցում են ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանի հետ: Ինստիտուտների տնօրինությունների հետ քննարկվեցին համագործակցության հարցեր:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

(Յուրի Սուվարյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)

Լրացավ հայ նշանավոր գիտնական, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ակադեմիկոս Յուրի Սուվարյանի 75 տարին:

Յու. Սուվարյանը քաջածանոթ անուն է Հայաստանի գիտական հասարակայնությանը, հատկապես բուհական մտավորականությանը, ինչպես և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի շրջանակներին: Հիրավի՝ զարմանալի, բովանդակալից և արգասաբեր կյանքով է ապրում ակադեմիկոս Յու. Սուվարյանը, կարողանում է համատեղել գիտական և մանկավարժական լարված աշխատանքը վարչականի հետ, բեղուն գրչով կյանքի կոչում մեկը մյուսից խոր և արժեքավոր հետազոտություններ, նպաստում բազմաթիվ ասպիրանտների ու հայցորդների գիտական աճին, խորհրդատվություն իրականացնում ինչպես ՀՀ պետական զանազան մարմինների, այնպես էլ Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների համար:

Յու. Սուվարյանը ծնվել է 1943 թ. ԼՂՀ Ասկերանի շրջանի Սղնախ գյուղում, 1965 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, ապա՝ ասպիրանտուրան: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1983 թ.՝ դոկտորական ատենախոսություն: 1987-1994 թթ. պրոֆեսոր Սուվարյանը, որպես Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, ինչպես նաև տնտեսագիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահի տեղակալ, ապա նաև՝ նախագահ, մեծապես նպաստել է բուհում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: 2006 թ. դառնալով հարազատ բուհի ռեկտոր՝ Յու. Սուվարյանը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ կրթահամակարգի բովանդակային և կառուցվածքային արմատական վերափոխումների՝ համահունչ միջազգային պահանջներին: Նրա ղեկավարության շրջանում տնտեսագիտական համալսարանն անցավ հանրապետության օրինակելի բուհերի առաջին շարքը: 2006 թ. Յու. Սուվարյանն ընտրվել է Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, 2010 թ.՝ իսկական անդամ, 2011 թ.՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Բարեխղճորեն կատարելով իր պարտականություններն այդ պաշտոնում՝ նա որոշակի ավանդ է ներդրել «Հայագիտության զարգացման հայեցակարգի» և «2012–2025 թթ. հայագիտության զարգացման ռազմավարության» մշակման, Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող հիմնադրամի ստեղծման գործում:

Յու.Սուվարյան քաղաքացու կերպարը հասկանալու համար կարևոր է նշել նաև 1991-1992 թթ. նրա աշխատանքը որպես ՀՀ վարչապետի խորհրդական (համատեղության կարգով): Երկրի տնտեսության համար օրհասական այդ պայմաններում առավելագույնս պիտանի եղան Յու. Սուվարյանի համակարգային մտածելակերպը, արագ կողմնորոշվելու և վճռելու փորձը, տնտեսական և սոցիալական հիմնախնդիրների ներքին կապն զգալու ու դրանք համադրված լուծելու կարողությունը: 1994 թվականից Յու. Սուվարյանը ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչն է: Նրա ջանքերով ամբիոնը վերածվել է գիտամանկավարժական հզոր կենտրոնի: Պատկառելի է հենց իր՝ ակադեմիկոս Սուվարյանի գիտական հրատարակությունների ցանկը. շուրջ 270 աշխատություն, որից 40-ը մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ: Նրա գիտահետազոտական աշխատանքի կարևորագույն արդյունքներից են արտադրության արդյունավետության և ամբողջական աշխատանքի արտադրողականության գնահատման ու կառավարման նոր մեթոդաբանության մշակումը, գիտության կառավարման կարևորագույն հիմնախնդիրների նոր լուծումների, հանրային կառավարման տեսության յուրօրինակ հայեցակարգի հիմնավորումը, ՀՀ վարչատարածքային նոր բաժանման և տեղական ինքնակառավարման երկաստիճան համակարգի մշակումը, հայ կառավարչական մտքի զարգացման ընթացքի և միտումների բնութագրությունը, հանրապետության տնտեսական զարգացման վրա կրթության և գիտության ներազդեցության գնահատումը, գիտակրթական համակարգի կառավարման նոր հայեցակարգի առաջադրումը:

Յու. Սուվարյանի ղեկավարությամբ ու խմբագրմամբ լույս է տեսել «Մենեջմենթ»՝ հայերեն բուհական առաջին դասագիրքը (1999, 2002, 2009, 2016), որը եղավ վերջին շրջանի հայ տեսական-մանկավարժական մտքի նվաճումներից մեկը: Բուհական ուսուցման համակարգի արդիականացման մեջ պրոֆեսոր Յու. Սուվարյանի և նրա համախոհների ծանրակշիռ ներդրումը եղան «Ձեռնարկության արդյունավետ կառավարում» և «Ծառայությունների ոլորտի արդյունավետ կառավարում» էլեկտրոնային համակարգչային գործարար խաղերի մշակումն ու ներդրումը: Ակադեմիկոս Յու. Սուվարյանի գիտական ղեկավարությամբ մշակվել են մի շարք գործնական ուղղվածության ծրագրեր, մասնավորապես՝ ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը (1994 թ.), ՀՀ երկաթուղային տրանսպորտի բարեփոխումների ծրագիրը (1998 թ.), որոնք ընդունվել են հանրապետության գործադիր իշխանությունների կողմից և իրագործվել: Դժվար է գերագնահատել Յու. Սուվարյանի դերը տնտեսագիտական բարձրորակ կադրերի, գիտական հերթափոխի պատրաստման ասպարեզում: Անցած տարիներին նրա ղեկավարությամբ տնտեսագիտության թեկնածուի և դոկտորի աստիճան են ստացել բազմաթիվ ասպիրանտներ ու հայցորդներ: Ակադեմիկոս Յու. Սուվարյանի մասնագիտական բարձր կարողությունները, գիտամանկավարժական վաստակը գնահատված են «Անանիա Շիրակացի» (2000), ԼՂՀ «Մայրական երախտագիտության» (2007), «Վաչագան Բարեպաշտ» (2013), Միջազգային փիլիսոփայական ակադեմիայի «Դավիթ Անհաղթ» (2010), Հայրենիքին մատուցած ծառայությունների համար 1-ին աստիճանի (2011) մեդալներով և «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ (2017) աստիճանի շքանշանով: 2014-ին արժանացել է Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի կոչման: Նա «Հանրային կառավարում», «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», «Բանբեր հայագիտության» և այլ հայրենական ու միջազգային գիտական հանդեսների խմբագրական խորհուրդների անդամ է, ՀՊՏՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի նախագահն է, Դոնի Ռոստովի պետական տնտեսագիտական, Արցախի պետական և այլ համալսարանների պատվավոր պրոֆեսոր: Իր հարուստ փորձը Յու. Սուվարյանը տրամադրել է նաև Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնների կայացմանը: Այժմ 75-ամյա մեր գործընկերը լի է եռանդով, նոր գաղափարներով ու ծրագրերով: Մաղթում ենք քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Վլադիմիր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ...

հաղթահարել խորհրդային իշխանության հաստատման առաջին շրջանում ստեղծված դժվարությունները, ապահովել կրթամշակութային ու հասարակական մեծ առաջընթաց և հող նախապատրաստել 1991 թվականին Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնման համար: Սիրելի հայրենակիցներ, Հայաստանի անկախության հռչակումը շրջադարձային եղավ համայն հայության քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում՝ ամրագրելով հայության՝ սեփական ճակատագրին ու երկրին տեր կանգնելու նպատակը»,- մասնավորապես նշված է ՀՀ Սփյուռքի նախարարի ուղերձում:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա-ի ողջույնի ուղերձը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: «Մեծի Տան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով կողջունենք ձեզ: Հաւաքուած էք՝ լուսարձակի տակ բերելու ու

վերաարժեւորելու Մայիս 28, 1918-ին հռչակուած Հայաստանի առաջին Հանարապետութիւնը իր ներքին ու արտաքին տարածքներով ու յարակից դէպքերով, զարգացումներով... Ներկայ ամեակը ազգային հպարտութեան ու ցնծութեան առիթ է: Սակայն կը հավատանք, որ միաժամանակ ան մեզի ուղղուած մարտահրաւէր մըն է՝ 100-ամեակի համազգային նշումէն անդին նայելու, ոգիով ու նպատակասլաց մօտեցումով, մեր ժողովրդի ներկային ու ներկայի իրագործումներով կերտուելու կոչուած ապագային... »:

«...Պատմական փաստերը երբ ուսումնասիրում ենք, տեսնում ենք, որ կարող էր այդ հանրապետությունը չստեղծվել, բայց մեր ժողովրդի, նրա քաղաքական ուժերի, կամքի շնորհիվ էր, որ ստեղծվեց այդ հանրապետությունը և ունեցավ վիթխարի դեր մեր հետագա պետականության կերտման համար»,- իր ելույթում մասնավորապես ընդգծեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների ակադեմկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանն էլ նշեց, որ Առաջին Հանրապետության պատմության դասերը պետք է լավ ընկալել, որովհետև հայրենի երկրում ապրող հայ ժողովուրդը միշտ գտնվել է ու այսօր էլ գտնվում է աշխարհաքաղաքական բարդ ու վտանգավոր տարածքում, մի բան, որ Հայաստանի Հանրապետության ներկայիս իշխանություններին, ինչպես քաղաքական ուժերին այն ժամանակ պարտադրում էր, այսօր էլ պարտադրում է վարել այդ իրողությունից բխող բազմակողմանի հիմնավորված ներքին և արտաքին քաղաքականություն: «...Հայ ազգային գաղափարի և նրանով ձևավորված նպատակների լայն քարոզչությունը ազգային, քաղաքական ու հասարակական կազմակերպությունների, գիտության, կրթության, գրականության, մշակույթի բնագավառների գործիչները, և իհարկե, մենք՝ հայ պատմաբաններս, պիտի դիտենք որպես մեր առաջնահերթ խնդիրը: Մեր նոր սերնդին մենք սա պետք է ներշնչենք մշտապես, դարձնենք նրա միսն ու արյունը: Այդ իսկ պատճառով շատ եմ կարևորում այս գիտաժողովը»,- ասաց Արամ Սիմոնյանը:

Թբիլիսիի պետական համալսարանի անկախ գիտահետազոտական միավորի Իվ. Ջավախիշվիլու անվան պատմության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Գիորգի Ճեիշվիլին իր ողջույնի ելույթում մասնավորապես նշեց. «1918 թ.-ին Հարավային Կովկասում երեք անկախ պետություն ձևավորվեց: Մեկը մյուսի հետևից մայիսի 26-ին և 28-ին Թբիլիսիում վրացիները, հայերը և ադրբեջանցիները քվեարկեցին իրենց ազատության համար: Դա պատմական ընտրություն էր, որից մենք այսօր օգտվում ենք: Դա նաև խորհրդանշական էր իր զուգադիպությամբ ժամանակի և տարածության մեջ: Առաջին դեմոկրատական հանրապետությունները կարճատև էին, բայց դրանց հսկայական նշանակությունը մեր ազգերի պատմության մեջ մեծ է: Վրաստանի և Հայաստանի անկախ հանրապետությունների վերակառուցման գործընթացը նոր ժամանակակից աշխարհում բավականին հաջող փորձ էր: Վրաց և հայ ժողովուրդները ցույց տվեցին պետական և քաղաքական գիտակցության բարձր մակարդակ»:

Պլենար զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ռիչարդ Հովհաննիսյանը և ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը: Այնուհետև երկու օրերի ընթացքում շուրջ 70 զեկուցումներով հանդես եկան Հայաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի գիտնականները:

Գիտաժողովի կազմակերպիչներն էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ սփյուռքի նախարարությունը և Երևանի պետական համալսարանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Սերգեյ Մերգելյան – 90

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Սոս Աղայանը իր մեծ ուսուցչի՝ Սերգեյ Մերգելյանի մասին

Ականավոր գիտնական Սերգեյ Մերգելյանի ծննդյան 90-ամյակի առթիվ ՀՀ ԳԱԱ-ում կազմակերպված միջազգային գիտաժողովին իրենց մասնակցությունն ունեցան նաև նրա նախկին ուսանողները, սաները: Նրանց թվում էր ԳԱԱ արտասահմանյան անդամ Սոս Աղայանը, որը մեզ հետ զրույցում ներկայացրեց Սերգեյ Մերգելյան մեծանուն գիտնականի իր տեսլականը:



- Մերգելյանը եղել է ԽՍՀՄ պատմության մեջ ամենաերիտասարդ գիտությունների դոկտորը, նրան այդ աստիճանը շնորհվել է թեկնածուական թեզը պաշտպանելիս՝ 20 տարեկանում:

Մեծապես արժևորելով Մերգելյանի գիտական և կազմակերպչական գործունեությունը, ես գտնում եմ, որ Մերգելյանը արժևորվում և հայ ժողովրդի կողմից գնահատվում է մի քանի պատճառով: Նախ որ նա լուծեց «բազմանդամներով մոտարկման» խնդիրները, որը ձևակերպված է եղել դեռևս 1885 թ.-ին: Շատ հայտնի գիտնականներ նույնպես աշխատել են այդ խնդրի վրա, սակայն այն հաջողվեց լուծել միայն 66 տարի անց՝ 1951 թ.-ին: Նրա ապացույցը այնքան գեղեցիկ էր, հզոր ու կարևոր, որ շատ կարճ ժամանակում հեղինակին մեծ ճանաչում բերեց ամբողջ աշխարհում: Դրանից հետո Մերգելյանը ստացավ մի քանի կարևոր արդյունքներ: Շատ չանցած «Մերգելյանի թեորեմը» և «Մերգելյանի բազմությունները» արտահայտությունները արժանացան համընդհանուր ճանաչման և ընդգրկվեցին մաթեմատիկական գիտությունների գանձարանում և դասագրքերում: Մերգելյանը ապացուցեց այն, ինչի ձգտում էին շատերը: Այս աշխատանքի համար 1952 թ. Մերգելյանին շնորհվեց ԽՍՀՄ պետական մրցանակ: Փաստորեն նա այդ ժամանակ ստեղծեց «Մերգելյան բրենդը», որն այսօր էլ Հայաստանում որակի չափանիշի խորհրդանիշ է:

1950-ական թվականներին ԽՍՀՄ ղեկավարության կողմից որոշում կայացվեց Հայաստանում ստեղծել մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ, և այդ ծրագրի իրականացումը առաջարկվեց Մերգելյանին: Սերգեյ Մերգելյանը Մոսկվայից պետք է վերադառնար Հայաստան և կյանքի կոչեր այդ հույժ կարևոր աշխատանքը:

Ես կարծում եմ, որ սա Մերգելյանի մեծագույն ներդրումն էր Հայաստանի համար՝ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի ստեղծումը, որի հետ էլ կապված է ժողովրդական մեծ սերը նրա նկատմամբ:

Մոսկվայից ժամանելով Հայաստան, Մերգելյանը արագ ձեռնամուխ եղավ այդ աշխատանքի կյանքի կոչմանը: Նախանշվեց ինստիտուտի կառուցվածքը, նպատակները, հանձնարարվեց կազմել աշխատողների հնարավոր կազմը: Նախնական թիվը ներկայացված էր 300 աշխատող (պետք է ներկայացվեր Մոսկվայի հաստատմանը): Սա չգոհացրեց Մերգելյանին, և նա պահանջեց առնվազն հաշվարկել ինստիտուտի 3000 աշխատողի համար: Նա այդ հաստատության առաջին ղեկավարն էր (1956-1960 թթ.), և մինչև օրս ինստիտուտը նրա անունով էլ ժողովուրդը կոչում է՝ Մերգելյան ինստիտուտ: Մերգելյանը փաստորեն Հայաստանում սկիզբ դրեց կիբեռնետիկայի ու հաշվողական մեքենաների արտադրության ստեղծմանը և զարգացմանը: Ես կարծում եմ, որ այստեղ մեծ դեր է խաղացել Մերգելյանի ծանոթությունը աշխարհահռչակ գիտնական, կարելի է ասել կիբեռնետիկայի հիմնադիր Նորբերտ Վիների հետ: Եվ շուտով Մերգելյանի տաղանդի շնորհիվ այդ ոլորտում Հայաստանը դարձավ ԽՍՀՄ հիմնական կենտրոններից մեկը:

Երրորդ կարևոր գործը, որ իրականացրեց Մերգելյանը, դա գիտությունների ակադեմիայի հաշվողական կենտրոնի ստեղծումն էր: Նա գտնում էր, որ մեկ ինստիտուտում պետք է զբաղվեին տեսության հիմնավորմամբ, մյուսում՝ գործնականով: Սերգեյ Մերգելյանը հիմնեց գիտական և տեխնոլոգիական նոր ուղղություն՝ Հայաստանում ստեղծելով արհեստական ինտելեկտ՝ կիրառելով մաթեմատիկայի, նյութագիտության և համակարգչային տեխնիկայի հնարավորությունները (պիզա պոլիմերների միջոցով հավաքել էներգիան), որը այսօր մեծ թափով ուսումնասիրվում և իրականացվում է ողջ աշխարհում: Այս ինստիտուտների ստեղծումից հետո Հայաստանի մի շարք բուհերում բացվեցին ֆակուլտետներ՝ կիբեռնետիկայի, կիրառական մաթեմատիկայի և այլն: Այլ խոսքով, Մերգելյանը զարգացնում էր նոր ուղղություններ Հայաստանում՝ ապահովելով նորանոր աշխատատեղեր: Այսպիսի ուղղություններ զարգացնելը, աշխատատեղեր ստեղծելը շատ ավելի կարևոր էին, քան հավելյալ մեկ թեորեմ ապացուցելը: Մերգելյանը միշտ մի քայլ առաջ էր նայում և հասկանում էր, որ Հայաստանի ապագան լինելու է գիտական այս նորարություններին մեջ: Մերգելյանն ուներ լավ տեսլական: Նա ստեղծեց խոստումնալից ուսանողների խումբ և նրանց վրա հենվելով, առաջ էր տանում իր ծրագրերը:

Ի դեպ, ես համաձայն չեմ այն տեսակետի հետ, թե Մերգելյանը իր հայտնի թեորեմների ապացուցումից հետո այլևս գիտությամբ չի զբաղվել: Նա իրեն թույլ չէր տալիս ամեն ինչ տպել: Նա իր աշակերտների համար խնդիրներ էր դնում և առաջարկում այդ ուղղությամբ աշխատել: Ցույց էր տալիս ինչպես լուծել խնդիրները, բայց երբեք չի հավակնել լինել այդ ուղղություններում տպագրված շատ մեծարժեք հոդվածների համահեղինակը: Նա միշտ խրախուսել է երիտասարդներին, աջակցել, բայց երբեք չի փորձել օգտվել իր ուսանողների համահեղինակությամբ հոդվածներ տպագրելու գայթակղությունից: Նա չէր կարող չզբաղվելով գիտությամբ, լավ խնդիրներ դնել իր ասպիրանտների առջև: Ի դեպ, նա նաև շատ է զբաղվել արհեստական ինտելեկտի խնդիրներով:

Մերգելյանը զբաղվում էր նաև սիստեմների ուսումնասիրմամբ, բայց չի ունցել այն մակարդակի աշխատանքներ, որ իրեն թույլ տար նյութեր տպագրել դրաց մասին: Մերգելյանը միշտ կանգնած էր իր ուսանողների և աշխատողների կողքին՝ նրանց յուրաքանչյուր նախաձեռնության ժամանակ:

4-րդ հիմնական գործը, որ արել է Մերգելյանը՝ մեծ թվով աշակերտների պատրաստումն էր: Նրա լավագույն աշակերտների շարքում էին աշխարհահռչակ մաթեմատիկոս Անդրեյ Գոնչարը (որի մայրը հայ էր), Լ. Մարկուշևիչը, Ա. Շահինյանը և ուրիշներ:

Վստահորեն կարող ենք փաստել, որ Հայաստանում այսօր կիրառական մաթեմատիկայի և կիբեռնետիկայի հիմքը դրվել է Մերգելյանի կողմից, և դա երբեք չպետք է մոռանալ: Ի դեպ այսօր Հայաստանում ՏՏ ոլորտի զարգացման հիմքում պետք է տեսնել հենց Մերգելյանի այն ժամանակվա տեսլականը:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Սոս Աղայանի պատմածի հիման վրա նյութը պատրաստել է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտաշխատող Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆԸ

ՀՀ ԳԱԱ նախագահը մասնակցել է Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության 19-րդ գլխավոր ասամբլեային

Սույն թվականի մայիսի 16-18-ին ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը Բուլղարիայի գիտությունների ազգային ակադեմիայում մասնակցեց Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության (ALLEA) 19-րդ գլխավոր ասամբլեային: Գլխավոր ասամբլեայի շրջանակներում անցկացվեցին «Գիտությունը վտանգված վստահության և փորձաքննության ժամանակաշրջանում» և «Եվրոպական գիտական խորհրդատվության ձևավորում, գաղափարներ և փորձ» թեմաներով գիտական սիմպոզիումներ:

«Ներկայացվեցին զեկուցումներ գիտությունը և քաղաքականությունը թեմայով՝ ուշադրություն դարձնելով դրանց փոխհարաբերություններին, որովհետև գիտության զարգացումն անմիջապես կապված է տվյալ երկրի հնարավորությունների և գիտության նկատմամբ վերաբերմունքի հետ»,- ասաց ՀՀ ԳԱԱ նախագահը:

Գլխավոր ասամբլեայի ժամանակ Լեհաստանի ներկայացուցիչը հարց բարձրացրեց ակադեմիական ինստիտուտները ԲՈՒՀ-ական համակարգերին միացնելու մասին: Սակայն այս առաջարկությունը հանդիպեց խիստ բացասական գնահատականի տարբեր երկրների ակադեմիաների ներկայացուցիչների և ALLEA-ի նախագահի կողմից:

Գլխավոր ասամբլեայի ժամանակ տեղի ունեցան ALLEA-ի նախագահի և ղեկավար մարմնի ընտրություններ, որին մասնակցեց ՀՀ ԳԱԱ-ն: ALLEA-ի նախագահ ընտրվեց Շվեյցարիայի արվեստի և գիտությունների ակադեմիաների նախագահ, Բազելի համալսարանի նախկին ռեկտոր Անտոնիո Լոպրիենոն:

ՀՀ ԳԱԱ նախագահը հանդիպում է ունեցել ALLEA-ի նորընտիր նախագահի հետ և հրավիրել Հայաստան՝ մասնակցելու այս աշնանը տեղի ունենալիք ՀՀ ԳԱԱ 75-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին: ՀՀ ԳԱԱ-ի հոբելյանական միջոցառումներին մասնակցելու է հրավիրվել նաև Էստոնիայի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը: Երկու նախագահներն էլ ընդունել են հրավերը:

ALLEA-ն հիմնադրվել է 1994 թ. -ին և միավորում է Եվրոպական խորհրդի տարածաշրջանի 40 երկրների 60 ակադեմիաներ: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան ևս անդամակցում է ALLEA-ին՝ կարևորելով միջազգային համագործակցությունը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը

Սույն թվականի հունիսի 13-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանին:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գործունեության հիմնական ոլորտներն են՝

- հայ ժողովրդի կազմավորումը, Հայոց հնագույն պետականությունների պատմություն
- Հայաստանը միջին դարերի, Կիլիկիայի հայկական պետականության պատմություն
- հայ եկեղեցու պատմություն
- հայ ազգային-ազատագրական շարժումների պատմություն
- հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն
- հայ մամուլի, քաղաքական հոսանքների և կուսակցությունների պատմություն
- Հայաստանում ժողովրդագրական գործընթացների ուսումնասիրություն
- Հայաստանի I (1918-1920 թթ.), II (1920–1991 թթ.), III (1991 թ. հետո) հանրապետությունների, ԼՂԻՄ, ԼՂՀ պատմություն
- հայ գաղթավայրերի և Սփյուռքի պատմություն
- Հայոց պատմության աղբյուրագիտություն և պատմագրություն:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը համագործակցում է Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Մոլդովայի, Ռումինիայի, Ֆրանսիայի և շատ այլ երկրների համապատասխան գիտական կառույցների հետ:

Աշոտ Մելքոնյանը 2002 թ.-ին ստացել է պատմական գիտությունների դոկտորի աստիճան, 2004 թ.-ին՝ պրոֆեսորի, 2006 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, 2014 թ.-ին՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Աշոտ Մելքոնյանի հիմնական աշխատությունները նվիրված են Արևմտյան Հայաստանի, հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Զավախքի պատմության, հայ-վրացական հարաբերությունների, Հայաստանի պատմական ժողովրդագրության, պետականության հիմնահարցերին: Նա ավելի քան 400 աշխատության հեղինակ է:

Աշոտ Մելքոնյանը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ղեկավարում է 2002 թ.-ից: Արժանացել է «Մովսես Խորենացի», «Գարեգին Նժդեհ», «Արգիշտի Առաջին», «Վաչագան Բարեպաշտ», ԵՊՀ և Խաչատուր Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի ոսկե մեդալների:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Միջազգային գիտաժողով նվիրված ազգային բարերար և պետական գործիչ Մանուկ Բեյ Միրզայանին

Գիտաժողովին մասնակցում էին գիտնականներ Հայաստանից, Ուկրաինայից, Մոլդովայից, Ռումինիայից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Թուրքիայից: Գիտաժողովի հյուրերի թվում էր Մոլդովայի Հնչեշտ քաղաքում Մանուկ Բեյի վերականգնված ապարանքի տնօրեն Պլանչիտե Տուդորը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: «Մանուկ Բեյ Միրզայանը, լինելով Կարբի գյուղի բնակչի որդի, դարձել է խոշոր վաճառական, դիվանագետ, պետական գործիչ և ունեցել է վիթխարի դերակատարություն նախ Թուրքիայում, ապա կյանքի վերջին շրջանում՝ դառնալով ռուսահպատակ, ռուսական արքունիքում: Նա երբեք չի մոռացել իր հայրենի ժողովրդին: Զբաղվելով բարեգործությամբ, եկեղեցաշինությամբ՝ փորձել է օգտակար գործ անել իր ժողովրդի համար: Մխիթարյան միաբանության գործիչների հետ փորձ է արել հրատարակել հայոց լեզվի դասագիրք, ինչն արդեն մի նոր էջ է նրա կյանքի պատմության մեջ: Այսօրվա գիտաժողովով մենք մեկ անգամ ևս վերհիշում և վերաարժևորում ենք այն գործը, որ իրականացրել է Մանուկ Բեյ Միրզայանը տարբեր երկրների համար»,- իր ողջույնի ելույթում մասնավորապես ասաց Յուրի Սուվարյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին նաև ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդ, եպիսկոպոս Տ. Տաթև Հակոբյանը, ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Մուշեղ Աբգարյանը:

Գիտաժողովում ներկայացվեցին հետևյալ զեկուցումները.

- Մանուկ Բեյ Միրզայանի կյանքը և գործունեությունը
- Ռուս-թուրքական պատերազմը (1806-1812) և Բուխարեստի հաշտության պայմանագիրը
- Օսմանյան և Ռուսական կայսրությունների և Բալկանյան երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները 18-րդ դարի երկրորդ կեսից - 19-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում
- Ազգային փոքրամասնությունները Օսմանյան և Ռուսական կայսրությունների փոխհարաբերություններում
- Մանուկ Բեյի հայաշեն, եկեղեցաշեն գործունեությունը, Մանուկ Բեյը և հայերը:

Գիտաժողովի մասնակիցները հունիսի 9-ին ներկա եղան Արագածոտնի մարզի Կարբի գյուղի հրապարակը Մանուկ Բեյ Միրզայանի անունով անվանակոչման արարողությանը և եկեղեցում Միրզայան գերդաստանի հիշատակի ոգեկոչման պատարագին: Նրանք այցելեցին Մեսրոպ Մաշտոցի գերեզման և Արագածոտնի Հայոց թեմի Առաջնորդարան:

Միջազգային գիտաժողովի կազմակերպիչն էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը:

Մանուկ Բեյ Միրզայանը ծնվել է 1769 թ.-ին Բուլղարիայի Ռուշչուկ բնակավայրում, որտեղ հաստատվել էին 1744 թ.-ին Աշտարակի Կարբի գյուղից գաղթած նրա ծնողները: 12 տարեկանում Մանուկը մեկնել է Յասսա՝ հայ առևտրականների մոտ սովորելու: Երիտասարդ տարիքում դարձել է Բալկանների ամենահարուստ մարդկանցից մեկը: Եղել է տեղի իշխանությունների պետական խորհրդական: Օսմանյան կայսրությանը մատուցած ծառայությունների համար 1808 թ. սուլթանից ստացել է Մոլդովայի իշխանի՝ Bogdan Prensi և Bey-ի տիտղոսներ և որոշ ժամանակ դարձել Մոլդովայի կառավարիչ: Նույն թվին Կ. Պոլսում նշանակվել է դիվանագիտական բանակցությունների գլխավոր թարգման արտաքին գործոց նախարարի օգնականի մակարդակով: 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ զբաղվել է օսմանյան բանակի պարենավորմամբ և ռազմական նշանակության կառույցների նորոգմամբ: Եղել է օսմանյան Դանուբյան բանակի հրամանատար Մուստաֆա փաշա Բայրաքթարի խորհրդականը՝ օժտված ռուսների հետ հաշտության բանակցություններ վարելու լիազորությամբ: Մանուկ Բեյի ջանքերի, դիվանագիտական հմտությունների շնորհիվ կայացել են ռուս-թուրքական 1806-1812 թթ. պատերազմի հաշտության մի շարք բանակցություններ, որոնց արդյունքում 1812 թ. նրա իսկ պալատում կնքվել է Բուխարեստի ռուս-թուրքական հաշտության պայմանագիրը:

1804-1808 թթ. Մանուկ Բեյը կառուցել է Բուխարեստի տեսարժան վայրերից մեկը հանդիսացող մի պալատ, որը մինչ օրս հայտնի է Մանուկի խան անունով:

1813 թ. Բուխարեստից տեղափոխվել և հաստատվել է Քիշինևում, դարձել՝ ռուսահպատակ:

Մանուկ Բեյը Հայաստանի ազատագրումը կապել է Ռուսաստանի հետ: Այցելել է Հայաստան, նյութական օժանդակություն ցույց տվել Էջմիածնի, Մուշի և այլ վայրերի վանքերին: Բուխարեստի հայոց եկեղեցու մերձակայքում 1817 թ.-ին հիմնել է քաղաքում առաջին հայկական դպրոցը: Նա 100 հայ ընտանիք տեղափոխել է և պատրաստվում էր շուրջ կես միլիոն օսմանահպատակ հայերի ևս տեղափոխել Վալախիա մշտական բնակության:

1817 թ. Հնչեշտում հիմնել է իր ընտանեկան ապարանքը ֆրանսիական կլասիցիզմի ոճով: 1993 թ. ապարանքը ստացել է ճարտարապետական հուշարձանի կարգավիճակ և այժմ համարվում է Մոլդովայի ազգային հարստությունը:

Մանուկ Բեյը նպաստել է բալկանյան մի շարք քաղաքների տնտեսության զարգացմանը և քաղաքաշինությանը:

Մանուկ Բեյը հանկարծամահ է եղել 1817 թ. հուլիսի 2-ին Հնչեշտում: Թաղված է Քիշինևում՝ իր կառուցած ս. Աստվածամայր եկեղեցու բակում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

1992 թվականի հունիսի 21-ին, 26 տարի առաջ, սպանվեց, ոչ, չզոհվեց, այլ դավադիր կրակոցների զոհ դարձավ Արցախյան ազատամարտի կազմակերպիչ և հերոս, կենդանի առասպել Լեոնիդ Ազգալդյանը:

ՄԵՐ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԿԵՆԴԱՆԻ ԱՌԱՍՊԵԼԸ

ԼԵՈՆԻԴ ԱԶԳԱԼԴՅԱՆ

Շամխորից Թիֆլիս եկած Ռուբեն Ազգալդյանը, որ ամուսնացել էր նրբակիրթ ու գեղեցկատես մի հայուհու՝ Նինայի հետ, մտերիմ ընկերոջից, ՀՍՍՀ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Արտեմի Հարությունյանից Հայաստանում հաստատվելու հրավեր ստացավ ու նշանակվեց Նոր Բայազետի շրջկոմի քարտուղար: Կուսակցական այս աշխատողը շրջանի ղեկավարն էր ու բատրակը, կառուցողական աշխատանքների կազմակերպիչն ու առաջնորդողը, որ իր շրջանի բնակիչներից բնավ չէր տարբերվում ոչ հագուկապով, ոչ առավել ևս ապրուստով: Շրջանի առաջին դեմքի ընտանիքն էլ ապրում էր այնպես, ինչպես բոլորը, հավասարապես կիսելով և՛ սովը, և՛ ցուրտը, և՛ դժվարությունները այնպես, որ երկրորդ զավակի՝ Լեոնիդի բարեհաջող ծնունդն ապահովելու համար մայրը մեկնեց Թբիլիսի, ուր և 1942 թվականի նոյեմբերի 22-ին ծնվեց նրբակիրթ մորն այնքան նման, հոր ազնվագույն կեցվածքը ժառանգած այս հրաշամանուկը՝ Լեոնիդ Ռուբենի Ազգալդյանը: 1947 թվականին ընտանիքը տեղափոխվեց Երևան: 1949 թվականին Լեոնիդն ընդունվեց Մռավյանի անվան արական միջնակարգ դպրոց, առաջինից մինչև տասներորդը համարվելով դասարանում ամենալավը, ազնվագույնը, տուժած ու ճնշված երեխաների անձնազոհ պաշտպանն ու արդարադատը: Դասարանում ամենահասարակ ու անշուք հագնվողը Լեոնիդն էր: Պաշտոնյայի որդին երբեք նոր շոր չէր հագնում, որ հանկարծ չտարբերվեր մյուսներից: Նրան լսում էին ու սիրով ենթարկվում, քանզի նա միշտ ճիշտ էր: Լեոնիդը լիդեր էր՝ առաջնորդ: Նրա թիկունքում բոլոր ընկերներն իրենց ապահով ու անվնաս էին զգում: Տասներորդ դասարանն ավարտելուց հետո Լեոնիդը մեկնեց Մոսկվա և ընդունվեց Լոմոնոսովի անվան համալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետը, մաթեմատիկայի ընդունելության քննության ընթացքում ապշեցնելով քննող դասախոսներին: Մոսկվայում սովորելիս Երևանում կորցրեց մորը: Բարեսիրտ, հեզանազ, քնքշասիրտ մայրը Լեոնիդի պաշտամունքն էր, ու նա ուսումը թողած՝ Երևան վերադարձավ: Դարձավ ռադիոֆիզիկոս, գիտնական, գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, իսկ հետո ազգային-ազատագրական մեր պայքարի առաջին բանակի՝ Անկախության բանակի, հետո արդեն Ազատագրական բանակի հիմնադիրն ու առաջին հրամանատարը: Ոչ մեծաքանակ, բայց կատարյալ մի բանակ, որ մարտի էր ելնում ոչ թե սպանելու կամ սպանվելու, այլ հաղթելու համար: Հարկավոր էր հաղթել հանիրավի գրավված մեր հողերը հետ վերադարձնելու համար, և նա անկորուստ ազատագրեց Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանները, որոնք խորհրդային տարիներին բարեկամաբար առաջանալով ու հայոց շեներում բնակություն հաստատելով գրավել էին ադրբեջանցիները: Այդպես խեղդել էին և Արցախը, հայտնվելով հայոց շեներն իրար կապող ճամփաբաժաններում: Դրանցից շատերը հետագայում Ազգալդյանն ազատագրեց իր զինակից, Արցախի ճակատի հրամանատար Վլադիմիր Բալայանի հետ՝ պաշտպանելով ու ազատագրելով Բուզլուխ, Էրքեջ, Մանաշիդ, Մարաղա, Կիչան, Ծամծոր, Տող գյուղերը, Իմերեթ-Քերևենքը, Չայղուվուշանը, Աղդաբանը, Մանիկլյուն, Բաշ Գյունեփյան, Օրթա Գլունեփյան, Սրխավենդը: Մեծ զորավարը նախապատրաստվում էր այս մեծ մարտին, որ մղվելու էր հանուն ամբողջական ու միացյալ Հայաստանի: Իսկ այդ վեհ գաղափարն իրականություն դարձնելու համար նրան պետք էին կատարյալ հայորդիներ ու նվիրյալներ, որոնց ինքնազոհաբերումն սկսվելու էր մանրուք թվացող, բայց մարտադաշտում կարևորագույն դեր խաղացող ձեռքբերումներից: Սթափ ուղեղ, ճկուն միտք, պրկված, դիմացկուն մկաններ և հաղթելու անկոտրում ուժ ունենալու համար, նրա զինվորը պետք է թողներ ծխելը, խմելը, հեռու մնար աշխարհիկ գայթակղություններից, ութը ժամ մարզվեր ու կոփվեր, անվերապահորեն կատարեր հրամաններն ու անմնացորդ, սիրեր հայրենիքն իր ողջ ապրող ու շնչող բնությամբ: Այնպես, ինչպես անում էր ինքը՝ Լեոնիդ Ազգալդյան մարդը, հայն ու հայրենյաց պաշտպանը:

- Լեոնիդը մարդ էակի, հողից ծնվածի ոգեղեն դառնալու ապացույցն է Հայաստանում,- ասում է Ազգալդյան հրամանատարի զինվորն ու մարտական ընկերը՝ Սարգիս Հացպանյանը: Լեոնիդ նշանակում է հաղթանակ, որը ես սովորեցի իրենից: Պարզապես հաղթանակ: Նրա կանգնած տեղում հաղթանակն ինքնըստինքյան էր գալիս: Լեոնիդը մոտավորապես ութից տասը ժամ տևող շատ լուրջ ռազմական ուսուցման կենտրոններ հիմնեց Հայաստանի տարբեր շրջաններում: Վարդենիսի շրջանում, որտեղ ես ծանոթացա իր հետ կենդանի վկայությամբ, զարմացած էի, շշմած, որ մեր երկրում՝ Հայաստանում, այդպիսի էլիտար խումբ է ստեղծվել:

Իրեն շրջապատող մարդիկ, զոհաբերության պատրաստ այդ նվիրյալները, իրոք, Լեոնիդի փոքրիկ կաթիլներ էին, որովհետև ես գտնում եմ, որ ոչ ոք Լեոնիդ չէր կարող լինել, չեղավ, որովհետև այդ մարդը իսկապես գերմարդ էր, գերհզոր անձնավորություն, որն ունենալու հպարտությունն ունի մեր ազգը և կարող է, իրոք, դարեր շարունակ անվերջ հիշել Լեոնիդ Ազգալդյանին:

Ահա տեսաժապավենից վերծանված մի հատված մարտի դաշտ ելնելու և հայրենի սահմանները պաշտպանելու համար զենք վերցրած հրամանատար Լեոնիդ Ազգալդյանի խոսքից, որը նաև պատգամ է ապրող սերունդներին.

- Սա Հայաստանն է և վերջ:

Այստեղ (նկատի ունի ողջ Լեռնահայաստանը) փաստորեն ֆորպոստն է մեր ազգի: Գետաշեն, Շահումյան, Արցախ, մնացած վայրերը, ինքը՝ Զանգեզուրը: Դրանք գտնվում են անմիջապես ոչնչացման վտանգի տակ, և սրանք դատարկ խոսքեր չեն, դա իրոք էդպես է: Ցանկացած պահի՝ մի փոքր կազմակերպված ուժ կարող է կտրել, կատարել հարձակում և կրկնել տասնութ թիվը: Հեշտությամբ:

Անկախության բանակի ապառազմականացումից հետո ստեղծված Ազատագրական բանակը, Լեոնիդ Ազգալդյանի հրամանատարությամբ, ութը հսկայածավալ ռազմական գործողությունների արդյունքում քսանութ շեն ազատագրելով, քիչ վիրավորներ և երեք գոհ ունեցավ: Մեկ ու կես տարվա հաղթանակած մարտերից հետո երեք զոհ: Ահա, այսպիսի բանակ էր ստեղծել մտավորականը, գիտնականն ու մեծ հայրենասերը, որի մասին նորանկախ, մեր հանրապետության պաշտպանության նախարար Վազգեն Մանուկյանն ասել է. «Այս աթոռին Լեոնիդ Ազգալդյանը պիտի նստեր»: Լեոնիդին աթոռ պետք չէր, նա այլ երազանք ուներ:

- Մի հավատացեք, եթե գան ձեզ ասեն, որ ես զոհվել եմ: Ես Իսթամբուլի պարիսպների տակ եմ ընկնելու,- «Իսթամբուլ»-ը շեշտելով ասում էր նա, երբ իր զոհվելու մասին հերթական լուրերն էին պտտվում: Իսկ Իսթամբուլի պարիսպներին հասնելու համար նրան աթոռ պետք չէր, նա ստեղծել էր կայուն, հոգով ու մարմնով ուժեղ ու կուռ, փոքրաթիվ մի բանակ, որով կհասներ իր երազանքի իրականացմանը եթե... եթե դավադիր կրակոցները չփակեին նրա հողեղեն մարմնի ճանապարհը: Հիմա նրա հոգին Ծովից ծով Հայաստանի քարտեզն առած որպես ազգը հաղթանակների առաջնորդող, ինքնայրումով բարեխոսում է Ամենակալին իր ամենակարող զորությամբ տանել Հայի դատը, որը կռվում է ոչ թե սպանելու, այլ արժանապատվորեն ապրելու համար:

Գոհար ՄԱՐՏԻԿՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

ԵՌԱԳՈՒՅՆԸ ՇՈՒՇՎԱ ԲԵՐԴԻՆ

Եվ չտեսան, և չտեսան, նրանց աչքերն արնոտ ու կույր,
Որ դու Արցախ, ոչ թե մի բուռ, այլ բռունցք ես՝
պղնձակուռ:
Եվ չտեսան, և չտեսան, որ Դեր-Զորից այն հեռավոր,
Պատռած պատանքն իր ավազե, ելավ մանուկ մի թևավոր,
Ելավ մանուկ մի հրաչյա, չքնաղ նման հրեշտակի,
Որ իր փոքրիկ բռունցքներով նախ երկնքի դուռը թակի,
Ապա մաքուր իր ձեռքերով առած նշխարն արդարության,
Իջնի Արցախ՝ շրթունքներին երգը ոխի ու հարության.
- Թրքաց մայրեր թող լան ու դուն,
- Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...
Եվ չտեսան, և չտեսան, որ դարձած լույս, դարձած ոգի,
Նորից Նժդեհն է արշավում, նման մի նոր Սուրբ Գևորգի,
Որ բոցերից Սումգայիթի ելնում աղջիկ մի սիրասուն,
Ելնում փխրուն ու բարալիկ, բայց և ահեղ, որպես ցասում,
Որ ելնում են ամեն կողմից ֆիդայիներն այս ոգեղեն,
Դառնում անտես մի զորագունդ, թշնամու դեմ դառնում
գեհեն:
Եվ եռագույնն են ծածանում մեր հինավուրց
Շուշվա բերդին
Վրեժի շանթն աչքերի մեջ, վրեժի երգն իրենց շուրթին.
- Թրքաց մայրեր թող լան ու դուն
- Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...
Ներե՛ք, տղերք, Ձեզ բոլորիդ ես չգիտեմ անուն-անուն,
Բայց շուրթերիս ամեն մեկիդ փառքի երգն է հասունանում,
Լոկ քեզ գիտեմ, քեզ քաջ Մոնթե, սակայն գիտեմ,
իբրև լեգենդ,
Գիտեմ, որ դու խոնարհ ու հեզ, բայց կռվի մեջ
կրակ ես խենթ:
Եվ քեզ գիտեմ, քա՛ջ Անդրանիկ, մաքրամաքուր
դու լույսի սյուն,
Դու անմարմին, որպես Հիսուս և էպոսի նոր դյուցազուն.
Երդումի պես Ձեր շուրթերին հնչեց նորից երգն առնացի,
Որ երգն է սուրբ՝ մեր քարեղեն ու ոգեղեն առեղծվածի,
- Թրքաց մայրեր թող լան ու դուն
- Ուրախ լուրեր տար ի Զեյթուն..
Փա՛ռք քեզ Հայոց անմահ ոգի, փառք հառնումին
քո հիասքանչ,
Դու լույսի սերմ, ցայգածաղիկ, լեռան աղբյուր ու
հողի կանչ,
Ծիրանի ծառ դու ծաղկավոր ու շեկ ժայռից բխած գիհի,
Երկինք միտող տաճար ու վանք և խորություն
անհուն վիհի,
Համբերության որձաքարի, և կայծակի դու շառաչյուն,
Դու նորածին հուրհեր մանուկ և հերոսի դեռ տաք աճյուն,
Եվ քանի դեռ սուր են խրում քո սրտի մեջ ու քո վերքի,
Քո շուրթերին թող չլռի՛ վրիժառու տողն այս երգի
- Թրքաց մայրեր թող լան ու դուն
- Ուրախ լուրեր տար ի Զեյթուն...

1992 թ. մայիսի 9

ՀՐԱՉՅԱ ՊՈՂՈՍՅԱՆԸ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ԿՅԱՆՔԻ Է ԿՈՉԵԼ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՎ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԹՎԱՅՈՂ ՄՏԱՀՂԱՅՈՒՄԸ

Հրաչյա Պողոսյան. հարգանքի և մեծագույն գնահատանքի արժանի անուն: Նա այսօր հայտնի է Հայաստանում, Ռուսաստանում և աշխարհի բազմաթիվ անկյուններում, և նրա անունն առաջին հերթին առնչվում է չափազանց աստվածահաճո և դրվատելի մի առաքելության՝ բարեգործության հետ:

Բարեգործությունը Հրաչյա Պողոսյանի համար ոչ թե ցուցամոլություն է, այլ՝ հավատամք: Եվ ահա Հրաչյա Պողոսյան մարդու և բարեգործի հերթական ձեռնարկը կրկին պսակվեց հաղթանակով:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հերոսական էջեր շատ են գրվել, և դրանցից մեկն իրավամբ Լենինգրադ քաղաքի շրջափակման ժամանակահատվածում քաղաքի բնակչության խիզախումն էր՝ կյանքի, առողջության և անասելի զրկանքների գնով դիմանալ պաշարմանը, դիմադրել և Պետրոս Մեծ կայսեր կառուցած քաղաքը չհանձնել թշնամուն: Քաղաքի շրջափակումը տևել է 872 օր՝ 1941 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 1944 թ. հունվարի 27-ը:

Եվ ահա վերջերս, Լենինգրադի շրջափակման ավարտի օրվանից 74 տարի անց, Սանկտ Պետերբուրգ քաղաքում տեղի ունեցավ մի պատմական միջոցառում, որին լենինգրադցիները երկար էին սպասել:

Այդ օրը այստեղ մեծ շուքով և հանդիսությամբ բացվեց «Մեր քաղաքը պաշտպանող լենինգրադցիների սխրանքը» խորագիրը կրող՝ վեհություն ու խիզախություն ներշնչող բրոնզածույլ հուշարձանը, որի կառուցումը նախաձեռնել և ֆինանսավորել է հայազգի բարերար և հասարակական գործիչ, ԱՊՀ Միջկառավարական ասամբլեայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալի խորհրդական Հրաչյա Պողոսյանը:

Արարողությանը մասնակցել են Սանկտ Պետերբուրգի նահանգապետ Գեորգի Պոլտավչենկոն, Սանկտ Պետերբուրգի Օրենսդիր ժողովի նախագահ Վյաչեսլավ Մակարովը, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովի գլխավորած պատվիրակությունը, ռազմական, հասարակական-քաղաքական և մշակույթի գործիչներ, հոգևորականներ, բազմաթիվ հյուրեր, ինչպես և հազարավոր լենինգրադցիներ, որոնց համար թանկ ու նվիրական է հայրենի քաղաքը, նրա հերոսական պատմությունը, հայրենակիցների քաջությունն ու մաքառումը:

Միջոցառմանն իր օրհնությունն ու բարեմաղթանքի խոսքն էր հղել Ռուսաստանի և Նոր Նախիջևանի հայոց թեմի առաջնորդ Տեր Եզրաս արք. Ներսիսյանը:

ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Էդուարդ Շարմազանովն իր ելույթում նշեց.

- Լենինգրադի հերոսական պաշտպանությունը Հայրենական մեծ պատերազմի ամենանշանակալի իրադարձություններից մեկն է: Այստեղ իրենց մահկանացուն են կնքել շուրջ քսան հազար հայորդիներ: Անվիճարկելի է հայ ժողովրդի նշանակալի դերը Լենինգրադի պաշտպանության գործում: Պաշտպանելով Լենինգրադը՝ նրանք պաշտպանում էին նաև Հայաստանը ֆաշիզմից: Շրջափակման մեջ գտնվող քաղաքի և ռազմաճակատի պարենի ապահովումը ղեկավարում էր Անաստաս Միկոյանը, Բալթիկ ծովում Լենինգրադը պաշտպանում էր ծովակալ Իսակովը, աշխարհահռչակ արևելագետ Հովսեփ Օրբելին կազմակերպում էր էրմիտաժի թանգարանային նմուշների տարհանումը, իսկ Լենինգրադի երկինքը պաշտպանում էր Նելսոն Ստեփանյանը:

Բարերար և հասարակական գործիչ Հրաչյա Պողոսյանն իր ջերմ ու սրտառուչ խոսքում նշեց.

- Լենինգրադի ճակատամարտում թշնամու դեմ կռվում էին նաև հայ ժողովրդի հազարավոր զավակներ, և այս հուշարձանով մենք ևս մեկ անգամ մեր վճռական ու ժխտողական վերաբերմունքն ենք արտահայտում ֆաշիզմի և ամենայն չարի նկատմամբ:

Սանկտ Պետերբուրգի «Շրջափակված Լենինգրադի բնակիչներ» հասարակական կազմակերպության նախագահ Ելենա Տիխոմիրովան իր խոսքում նշեց, որ քաղաքի խիզախ բնակիչների սխրանքն արտացոլող հուշակոթող կանգնեցնելու գաղափարը մի քանի տասնամյակների պատմություն ունի և այն ինչ-ինչ պատճառներով միշտ հետաձգվում էր: Եվ միայն իրենց կազմակերպության պատվավոր անդամ Հրաչյա Պողոսյանի աջակցության շնորհիվ մտահղացումը կյանքի կոչվեց, և հիանալի հուշակոթողը վերջապես իր տեղը գտավ հերոսական քաղաքում:

Վեհորեն հառնող հուշարձանի պատվանդանը քիչ անց ողողվում է անթիվ և անհամար ծաղիկներով և ծաղկեփնջերով. ծաղկեփնջեր՝ եկեղեցու, հյուպատոսարանի, ազգային ասամբլեայի, Հրաչյա Պողոսյան բարեգործական հիմնադրամի կողմից...

Միջոցառման ընթացքում մի շարք պետական և հասարակական կազմակերպությունների կողմից բարերար Հրաչյա Պողոսյանն արժանացավ բազմաթիվ պարգևների ու մեդալների:

2018-ը հայության կյանքում բեկումնային իրադարձությունների և արմատական փոփոխությունների տարի լինելուց բացի, նաև հոբելյանական է. այս տարի արդեն նշել ենք Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման 100-ամյակն ու նշելու ենք Երևանի հիմնադրման 2800-ամյակը: Բայց 2018-ը, նշանակալի և հոբելյանական լինելուց բացի, ինչ-որ առումով նաև «տիեզերական» է, և այս աննախադեպ նախաձեռնության հեղինակը բազմաթիվ ինքնատիպ մտահղացումներով մեզ պարբերաբար զարմանք ու հիացմունք պարգևող անձնավորություն է՝ պետերբուրգաբնակ մեր հայրենակից, ճանաչված հասարակական գործիչ և բարերար Հրաչյա Պողոսյանը: Եվ ի նշանավորումն 2018-ի մեր հոբելյանական տարեդարձների՝ Հայաստանի և Երևանի դրոշները Հրաչյա Պողոսյանի սրաթռիչ մտքի արդյունքում այժմ ծածանվում են տիեզերքում՝ Միջազգային տիեզերական կայանում:

Դրոշները տիեզերք են ուղարկվել մարտի 21-ին՝ տիեզերագնացներ Օլեգ Արտեմևի, Էնդրյու Ֆոյթելի և Ռիչարդ Առնոլդի հետ:

Ռուսական տիեզերանավի անձնակազմը երկիր կվերադառնա սեպտեմբերին, իսկ արդեն հոկտեմբերին՝ Էրեբունի-Երևան տոնակատարության 2800-ամյակի նախօրյակին, տիեզերքում «շրջագայած» դրոշները հանդիսավոր պայմաններում կհանձնվեն Հայաստանի ղեկավարներին:

ԱՊՀ Միջկառավարական ասամբլեայի խորհրդի գլխավոր քարտուղարի տեղակալի խորհրդական, բարերար և հասարակական գործիչ Հրաչյա Պողոսյանն արդեն երկար տարիներ հայ-ռուսական բարեկամության և երկկողմ հարաբերությունների ամրապնդման ու սերտացման ջատագովն է, նրա հասարակական ու բարեգործական գործունեությունը լայնորեն հայտնի է ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում: Հրաչյան առանձնակի վերաբերմունք ունի հոգևոր արժեքների և հոգևոր խորհրդանիշների հանդեպ: Նրա բարեգործական գործունեության մեջ մեծ տեղ են զբաղեցնում Հայրենական մեծ պատերազմի հերոսների հիշատակին նվիրված հուշարձանները, նաև՝ Մեծ եղեռնի զոհերի

հիշատակը հավերժացնող խաչքարերը: Պողոսյանի ջանքերով ստեղծվել են 90-ից ավելի մշակույթի, հոգևոր և պատմական նշանակության կառույցներ ու հուշակոթողներ: Դրանցից 26 հուշարձան նվիրված է Հայրենական մեծ պատերազմին, 7-ը՝ Հայոց ցեղասպանությանը, որոնք տեղադրված են տարբեր քաղաքներում: Նրա մեկենասությամբ տպագրվել են տասնյակ գրքեր և ամսագրեր, ինչպես նաև տարբեր թեմաներով վավերագրական ֆիլմեր: Հրաչյա Պողոսյանի բարեգործության շրջանակն ընդգրկում է այսօր արդեն մեկ տասնյակից ավելի երկիր:

Գոհար ԲՈՏՈՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծննդյան վկայականը՝ 2017 թ.

Հայտնաբերվել է մոլորակ, որի վրա կարելի է ապրել

Մոլորակը, որտեղ տեսականորեն կարելի է ապրել, հայտնաբերել են եվրոպացի գիտնականները: Երկնային մարմինը Կետի համաստեղությունում է և շատ ավելի մեծ է, քան Երկիր մոլորակը, ունի խիտ մթնոլորտ, իսկ մակերևույթը հիմնականում ծածկված է ժայռերով: Մոլորակը, որն ստացել է LHS 1140b համարը, 11 անգամ ավելի մոտ է Արևին, քան Երկիրը: Սակայն այն ստանում է Երկրի բնակիչների ստացած ջերմության և լույսի միայն կեսը: Հետևաբար՝ այս մոլորակի մթնոլորտը ավելի շատ կարող և հիշեցնել Մարս մոլորակը, քան Երկիրը: Մոլորակը Երկրից հեռու է 40 լուսատարի:

Ստեղծվել է մետաղական ջրածին

Գիտնականները, օգտագործելով մոտ 5 միլիոն մթնոլորտ ճնշում, առաջին անգամ մետաղական ջրածին են ստեղծել: Մետաղական վիճակում ջրածինը կարող է գործել որպես իսկական գերհաղորդիչ: Ենթադրվում է, որ մետաղական ջրածինը մթնոլորտակայուն է: Սա նշանակում է, որ շրջակա միջավայրի բնականոն պայմաններում այն չի փոխի իր հատկությունները: Գիտնականները նաև նշում են, որ մետաղական ջրածինը կարող է գերհաղորդիչ լինել նույնիսկ սենյակային ջերմաստիճանում, որը հնարավորություն կտա աննախադեպ արդյունքների հասնելու էներգիայի փոխանցման և կուտակման ոլորտում:

Google-ն արհեստական բանականությանը սովորեցրել է հարմարվել բարդ միջավայրին

Հուլիսի 11 ին Google-ի արհեստական հետազոտության DeepMind բաժինը հոդված էր հրապարակել, որը ցույց էր տալիս, թե ինչպես են ընկերության մասնագետները սովորեցնում արհեստական բանականության հաշվեկարգերին՝ հարմարվել բարդ և փոփոխվող միջավայրին: DeepMind-ի մասնագետներ կիրառել են ուժեղացված ինքնուսուցման մեթոդը (reinforcement learning, RL), որպեսզի համակարգիչը կարողանա սովորել տեղաշարժվել անծանոթ և բարդ միջավայրում: Այն ամենը, ինչ անում է գծերով նկարված «մարդը», ինքնուսուցման գործընթացի արդյունք է: DeepMind-ի ծրագրավորողներն իրենց գործակալին հագեցրել են մի շարք վիրտուալ հաղորդիչներով, որոնց շնորհիվ նա կարող է պարզել իր դիրքը և ստանալ շատ այլ տվյալներ շրջակա միջավայրի մասին: Իսկ համակարգիչը նոր շարժումների ու տեղաշարժվելու ձևեր է հորինում:

SpaceX-ը վերագործարկել է արդեն «գործածված» հրթիռը

SpaceX-ը հաջողությամբ զործարկել է արդեն օգտագործված Falcon 9 հրթիռը: Այս քայլն էլ ավելի կմեծացնի տիեզերակայանների հասանելիությունը՝ յուրաքանչյուր թռիչքի համար խնայելով ավելի քան 18 մլն դոլար: Հրթիռի արձակման առաջին փուլը հրթիռային համալիրի ամենաթանկ բաղադրիչներից մեկն է: Այն տասնյակ միլիոնավոր դոլարներ արժե: Falcon 9-ի վրա տեղադրված արբանյակի գործարկումը 62 մլն դոլար արժե, սակայն ժամանակի ընթացքում այդ գումարը կնվազի:

Նոր բեկում՝ քվանտային հաշվարկներում. 51 քուբիթանոց քվանտային համակարգիչ

Հուլիսի 28-ին ներկայացվել է 51 քուբիթանոց ռեկորդային քվանտային համակարգիչը, որը ճանապարհ է բացում դեպի տեխնոլոգիաների նոր կիրառում: Հարվարդի ռուս և ամերիկացի գիտնականներն ստեղծել և փորձարկել են աշխարհի առաջին՝ 51 քուբիթից բաղկացած քվանտային համակարգիչը: Սարքն իր տեսակի մեջ ամենաբարդ համակարգն է: Քվանտային համակարգիչները հատուկ հաշվարկային սարքեր են, որոնց հզորությունը ուժեղանում է՝ վերջիններիս աշխատանքում քվանտային մեխանիկայի օրենքների կիրառման շնորհիվ: Բոլոր նման սարքերը բաղկացած են քուբիթներից՝ հիշողության բջիջներից և միևնույն ժամանակ՝ պարզունակ հաշվողական մոդուլներից, որոնք կարող են իրենց մեջ պահել մեկի և զրոյի միջև ընկած արժեքները:

AlphaGo արհեստական բանականությունն ապացուցել է GO խաղում իր առավելությունը մարդու նկատմամբ

DeepMind-ի (պատկանում է Google/Alphabet-ին) մշակած արհեստական բանականություն AlphaGo ծրագիրը 3-0 հաշվով ավարտել է խաղերի շարքն աշխարհի ուժեղագույն խաղացող Քե Ցզեի դեմ: Սա վերջին միջոցառումն է, որտեղ խաղացել է AlphaGo-ն: DeepMind-ի հիմնադիր Դեմիս Հասաբիսն այս որոշումը բացատրել է նրանով, որ սա «Alpha Go-ի՝ որպես մրցակցական ծրագրի հնարավոր ամենաբարձր արդյունքն է»:

Գո խաղը խաղում են արդեն մոտ 3000 տարի, և մինչև վերջերս գիտնականները կարծում էին, որ արհեստական բանականությունը կարող է գերազանցել մարդուն միայն մի քանի տասնամյակ անց: Դա պայմանավորված է խաղին բնորոշ վերացարկման բարձր մակարդակով: Իրադարձությունների զարգացման հնարավոր տարբերակների քանակը չափազանց մեծ է՝ ընտրության մեթոդով լավագույն քայլը հաշվարկելու համար:

Երկրաբանները հայտնաբերել են Երկրի ութերորդ մայրցամաքը

Խաղաղ օվկիանոսի ջրերի հարավարևելյան հատվածի տակ Զելանդիան է՝ Երկիր մոլորակի ութերորդ մայրցամաքը: Այս եզրակացությանն են եկել Նոր Զելանդիայի, Ավստրալիայի և Նոր Կալեդոնիայի երկրաբանները:

Նոր մայրցամաքի մակերեսը մոտ 5 միլիոն քառակուսի կիլոմետր է, որի մեծ մասը՝ մոտ 94 տոկոսը, ջրի տակ է: Մայրցամաքի երկրային տարրերի շարքում են Նոր Կալեդոնիայի կղզիները, ինչպես նաև Հյուսիսային և Հարավային Նորզելանդական կղզիները:

Գիտնականների կարծիքով՝ Զելանդիան սկսել է հնագույն Գոնդվանա գերմայրցամաքից անջատվել մոտ 100 միլիոն տարի առաջ: Դա հանգեցրել է երկրագնդի կեղևի դեֆորմացիայի, որի արդյունքում մայրցամաքի մեծ մասը ջրի տակ է անցել: Երկրաբանները հաստատում են իրենց եզրակացություններն արբանյակային դիտարկումների, մասնավորապես՝ գրավիմետրիայի միջոցով, ըստ որի՝ Զելանդիայի տեղում մայրցամաքային, այլ ոչ թե օվկիանոսային կեղև կամ հրաբխային շերտեր են:

Ֆիզիկոսներն ստեղծել են աշխարհի առաջին «խոսող» թուղթը

Միչիգանի համալսարանի ֆիզիկոսները ներկայացրել են էներգաանկախ թուղթ, որը կարող է աշխատել և՛ որպես խոսափող, և՛ որպես բարձրախոս: Ամերիկացի գիտնականների հայտնագործությունը կարող է դառնալ առաջին «թուղթը» խոսող թերթերի համար: Այն էներգաանկախ բարակ և ճկուն թուղթ է, որն ունի բարձրախոսի և խոսափողի գործառույթներ: Թղթի վրա մեխանիկական ազդեցության դեպքում էլեկտրաէներգիա է արտադրվում:

Այս բարակ ճկուն թերթիկը կայծքարային հիմք ունի, որի վրա ֆեռոէլեկտրոնային պոլիպրոպիլենի, արծաթի և պոլիմերային նյութերի շերտեր են դրված:

Մեխանիկական ազդեցության կամ դեֆորմացիայի դեպքում նյութը կարող է էլեկտրական լիցքեր արտադրել: Ըստ գիտնականների՝ այն կարող է միաժամանակ աշխատել և՛ որպես բարձրախոս, և՛ որպես խոսափող, քանի որ նյութը կարող է մեխանիկական էներգիան վերածել էլեկտրաէներգիայի, և հակառակը:




91-ամյա նախկին ուսանողի շնորհավորանքը իր 80-ամյա դասախոսին

Մամուլէն տեղեկացա, որ մեր քիմիագիտութեան դասախօսը՝ ՎԻԼԷՆ ՅԱԿՈԲԵԱՆ, դարձած է 80 տարեկան:

Մեզի, սփիւռքահայ ուսանողներուս համար, 1964-1970 տարիներուն ան գիտութեան մէջ բրաբիոն ծաղիկը որոնողն էր: Դասախօս, որ ուսանողներուս ներկայութեան երբեւէ չէր բարձրացներ իր ձայնը: Կարծէք մեր եղբայրը ըլլար: Դասը չիմացողին բարդ խնդիրները կը բացատրէր այնպիսի պարզութեամբ, որ գլուխը վար առած կ'ամչնար այդքան պարզ խնդիր մը չկարենալ ըմբռնելու եւ անպատրաստ ներկայանալու համար:

Այդ տարիներուն արաբական երկիրներէ Հայաստան հասած ուսանողներուս թիւը երեսունը կ'անցնէր, իսկ 1970-ին անոնցմէ տասնհինգը որպէս բժիշկ վկայուելով վերադարձան տուն:

Բժշկական գիտութիւններու դոկտոր Վիլէն Յակոբեան Հայաստանը կը ներկայացնէր արտասահմանեան երկրներու ծանրաբնոյթ համագումարներու ընթացքին:

Այդ նշանակալի միջոցառումները առիթ կը հանդիսանային, որ սփիւռքահայ ուսանողներս ոչ միայն հպարտանայինք դասախօս Յակոբեանին սաները ըլլալնուս համար, այլ նաեւ կը մղէին, որ աւելի լուրջ մօտենանք դասերուն եւ ընդհանրապէս առաքելութեան:

Նշուած շրջանին էր նաեւ, որ մեր դասախօսը դարձաւ Երեւանի Բժշկական Համալսարանի ռեկտոր: Մեզի, արտասահմանեան ուսանողներուս համար, հպարտանալու նոր առիթ:

Գեղեցիկ օր մըն ալ դոկտոր Վիլէն Յակոբեան ժամանեց Հալեպ:

Անոր հետ մեր հանդիպումը դարձաւ խիստ հետաքրքրական:

Խումբով էինք ու մեր զրոյցի նիւթը ոչ թէ բժշկութիւնն էր, այլ գրականութիւնը:

Մեր դասախօսներէն ուրիշ մը՝ Փրոֆ Կծոյեան, գիրք գրած էր հայ բժշկութեան մասին, որ ես թարգմանելու համար յանձնեցի հայագէտ արաբ գրողի մը, յետոյ հրատարակեցի եւ գիրքը ղրկեցի արաբական աշխարհի բժշկական համալսարաններու գրադարաններուն:

Երեւանի Բժշկական Համալսարանի աշխոյժ գործունէութիւնը ներկայացուցած եմ բազմաթիւ յօդուածներով եւ բարեբաստիկ օր մը, երբ Երեւան էի, ինծի անակնկալ մը մատուցուեցաւ:

Հրաւիրուած էի բժշկագիտութեան նուիրուած հանդիսութեան մը, որուն ընթացքին բեմ հրաւիրուեցա եւ ձեռամբ դոկտոր Վիլէն Յակոբեանի, ստացայ բժշկական գիտութիւններու պատուոյ դոկտորական:

Հալէպ վերադարձէս ետք գրեցի եղեռնէն մինչեւ մեր օրերը գործող սուրիահայ բժիշկներուն նուիրուած գիրք մը:

Այսօր ես զոյգ քաղաքացիութիւն ունիմ՝ սուրիական եւ հայաստանեան: Առաջինը ծննդավայրս է, երկրորդը՝ Հայրենիքս:

Մարդ երբեւէ երկու հայրենիք չի կրնար ունենալ, ինչպէս չի կրնար ունենալ երկու մայր:

Երեւան հաստատուելէս ետք, բազում դասախօսներէս ողջ-առողջ գտայ մէկը միայն՝ դոկտոր Վիլէն Յակոբեան, որ այս օրերուն ՀՀ գիտութիւններու ազգային ակադեմիայի խորհրդական է:

Ի՞նչ ուրախութիւն էր կրկին հանդիպիլ, որպէս եղբայր ողջագուրուեցանք:

Այս գրութեամբ ես կ'ուզեմ ի սրտէ, եղբայրաբար ողջունել բժիշկ, դասախօս ու գիտնական Վիլէն Յակոբեանին ծննդեան ութսուն ամեակը, երբ ես՝ իր ուսանողը, ինսունմէկի մէջ եմ արդէն:

Երկար ու առողջ կեանք Ձեզի, սիրելի ութսունամեայ երիտասարդ, դոկտոր Վիլէն Յակոբեան:

Ձեր նախկին ուսանող՝ Թորոս ԹՈՐԱՆԵԱՆ
Երևան, 16 մայիսի, 2018 թ.

ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Վիկտոր Կատվալյանը

Սույն թվականի հունիսի 13-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրեց բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ Վիկտոր Կատվալյանին:

Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գործունեության հիմնական ոլորտներն են՝

- հայոց լեզվի կառուցվածքի և գործառության, պատմության և համեմատական քերականության ուսումնասիրություն, գրական արևելահայերենի և արևմտահայերենի քննություն, բարբառագիտություն, գրական լեզվի կանոնակարգում, տերմինաբանության մշակում,
- ուսուցողական լեզվաբանության հարցեր,
- կիրառական լեզվաբանություն, հոգելեզվաբանություն, տեքստի լեզվաբանություն,
- ստուգաբանական, երկլեզվյան, բարբառային, ուղղագրական-ուղղախոսական բառարանների և տերմինարանների, էլեկտրոնային համաբարբառների կազմում:

Վիկտոր Կատվալյանը 1988-1995 թթ. եղել է Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի գիտաշխատող: 1998-2004 թթ. եղել է Գավառի պետական համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան, 2011 թ.-ից դասախոսում է Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում: 2012 թ.-ից ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրենն է:

Վիկտոր Կատվալյանի հետազոտությունների ոլորտն ընդգրկում է ժամանակակից հայոց լեզուն, հայոց լեզվի պատմությունը, բարբառագիտությունը, գրաբարը, արևմտահայերենը: Նա 9 մենագրության, 60 գիտական հոդվածի հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի պաշտոնում ընտրվեց Անուշավան Զաքարյանը

Սույն թվականի հունիսի 13-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի պաշտոնում ընտրեց բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաքարյանին: Հանդեսի խմբագրական խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը:

Անուշավան Զաքարյանի հիմնական աշխատանքները նվիրված են 20-րդ դարասկզբի հայ իրականության առավել քիչ ուսումնասիրված հիմնախնդիրների, ռուս-հայ գրական, պատմամշակութային փոխհարաբերությունների լուսաբանմանը:

Անուշավան Զաքարյանը դասավանդել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտում, «Գալիք», «Գլաձոր», Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան մանկավարժական համալսարանում:

Նա ավելի քան 180 գիտական աշխատության, այդ թվում՝ 17 մենագրության և ժողովածուի հեղինակ է:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Ֆրանսիական նոր ֆիլմ Հայոց ցեղասպանության մասին

Ավստրալահայ համայնքի «Միութիւն» ազգային-քաղաքական-մշակութային ամսաթերթից տեղեկանում ենք, որ «Անատոլիական պատմություն» վերնագրով ֆրանսիական նոր ֆիլմ է պատրաստվում Հայոց ցեղասպանության մասին՝ հիմնված Մարկ Արենի (Կարեն Մարգարյան) «Այնտեղ, ուր ծաղկում են վայրի վարդեր: Անատոլիական պատմություն» գրքի վրա: Ֆիլմի ռեժիսորն է Արտակ Իգիթյանը, երաժշտության հեղինակը՝ Միշել Լեգրանը: Ֆիլմում, որի նկարահանումները տեղի են ունենալու 2018-ի ընթացքում, դերեր են ստանձնելու ֆրանսիացի հանրահայտ դերասաններ Սամի Նասերին (ծանոթ՝ «Տաքսի» կատակերգությունից) և Ժերար Դարմոն, ինչպես նաև հայազգի Հերմինե Ստեփանյանը:

Մարկ Արենի վեպում նկարագրվում են ապրումները հայատյաց մի թուրքի, որն իր ծերության տարիներին հայտնաբերում է, որ ծնողները հայ են եղել:

Հ. Ծ.

Հումոր

ՌՈՍՍԻՆԻԻ ՓՈՂՈՑԸ

Սինյոր Պիկկոլոն բացեց պատուհանը և ձայն տվեց անցորդին.

- Հլա մի րոպե կանգ առեք:
- Ի՞նչ է պատահել:
- Ես հիմա ձեզ կբացատրեմ, թե որտեղ է գտնվում Ռոսսինիի փողոցը: Կգնաք ուղիղ, հետո կթեքվեք աջ, ապա ձախ և մի քանի րոպեից կլինեք տեղում:
- Շատ շնորհակալ եմ, սակայն ինձ բացարձակապես չի հետաքրքրում, թե որտեղ է գտնվում այդ փողոցը: Ես հակառակ կողմն եմ գնում:
- Իսկ ինձ համար էլ կարևոր չէ, թե ինչն է ձեզ հետաքրքրում: Բայց, որ Ռոսսինիի փողոց կարող եք գնալ միայն այն ձևով, ինչպես ես բացատրեցի, դա անառարկելի է: Կարծում եմ, հասկացաք ինձ:
- Ներողություն, հարգելիս, բայց ձեր բացատրությունն ինձ ամենևին պետք չէ: Ասացի, չէ՞, ես ուրիշ տեղ եմ գնում:
- Ես դա արդեն լսեցի:
- Դե ուրեմն ձեզ պահեք ձեր խորհուրդները:
- Այ քեզ անշնորհակալ մարդ: Մի՞թե ձեզ համար հաճելի չէ, որ ես ինքնակամ ուզեցի ծառայություն մատուցել ինձ համար բոլորովին անծանոթ մի մարդու:
- Բայց, գրողը տանի, ես առանց ձեզ էլ հրաշալի գիտեմ, թե որտեղ է Ռոսսինիի փողոցը և ինչպես գնալ այնտեղ:
- Մի, մի հլա սրան նայեք: Իսկ ինչո՞ւ հենց սկզբից ինձ չասացիք այդ մասին: Ես իմ թանկ ժամանակը վատնում եմ նրա վրա, ինձ ենթարկում մրսելու վտանգի, իսկ ինքը, պարզվում է, գիտի ճանապարհը: Անբարոյական և անամոթ մարդ եք դուք, ահա թե ինչ կասեմ ձեզ,-զայրացած հայհոյեց սինյոր Պիկկոլոն և շրխկոցով փակեց պատուհանը:

***

Հռչակավոր երաժիշտ Լուի Արմսթրոնգը համերգներ էր տալիս Կոպենհագենում: Մի երեկոյից հետո նրան ծանոթացրին Նոբելյան մրցանակի դափնեկիր, նշանավոր ֆիզիկոս Նիլս Բորի հետ: Արմսթրոնգը ճաշից հետո Բորին հանգամանորեն բացատրում էր շեփորի կառուցվածքը, ինչպես բռնել գործիքը և նվագել: Բորն էլ իր հերթին Արմսթրոնգին բացատրում էր ատոմային միջուկի ճեղքման առանձնատկությունները:

Հանդիպումից հետո Արմսթրոնգը լրագրողների հարցին ի պատասխան ասաց.

- Հիմա Բորնը նույնքան է գլուխ հանում ջազից, որքան ես՝ ֆիզիկայից:

***

Երիտասարդ լուսանկարիչը, նկարելով Ուինքսոն Չերչիլին նրա 80-ամյակի օրը, ասաց.

- Ես հուսով եմ, որ հնարավորություն կունենամ Ձեզ լուսանկարելու նաև 100-ամյակի օրը:
- Հարգելի երիտասարդ, կարծում եմ դա միանգամայն հնարավոր է, միայն թե մի պայմանով՝ եթե դուք պահպանեք Ձեր առողջությունը:

ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Վոլտերին հարցրին, թե նա կգրի՞, արդյոք, իր թագավորի պատմությունը:

- Երբեք,- կտրուկ մերժեց Վոլտերը,- դա հաստատ միջոց կլինի կորցնել թագավորական թոշակս:

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. С. Ованесян - Ованес Туманян в годы Первой мировой войны.
2. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պր. III. Շարիաթական նոտարական փաստաթղթեր (ԺԷ-ԺԸ դդ.):
3. Արևելասիական ուսումնասիրություններ, հ.3.
4. Ժամանակակից Եվրասիա, հ.VI (2):
5. Ն. Հովհաննիսյան, Գ. Գևորգյան, «Արաբական գարունը». Համաարաբական ըմբոստությունը հանուն արաբական հասարակության արդիականացման (Թունիս, Եգիպտոս, Եմեն, Լիբիա):
6. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXXI:
7. Й. Стржиговский - Архитектура армян и Европа, т. I , книга вторая.
8. International Conference. Dedicated to 90 Anniversary of Sergey Mergelyan (20-25 may, 2018).
9. Հեղ. խումբ, Մ. թ. ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրները հայկական լեռնաշխարհի մասին:
10. Ա. Ավագյան, Վ. Բոյնագրյան, Գեոինֆորմատիկայի, գեոդեզիայի և քարտեզագրության հիմնական տերմինների և հասկացությունների եռալեզու բացատրական բառարան (ռուսերեն- անգլերեն-հայերեն):
11. Հ. Սիրունի, էջեր Մանուկ Բեյի կյանքեն: H. Siruni Pages from Manuk Bey's life.
12. Հեղ. խումբ, Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. գիտական հոդվածների ժողովածու - 2018, մաս I:
13. R. Aroutunian - Les mystéres de la santé Arménienne.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամը 2018 թ. հայտարարում է հայագիտական ուսումնասիրությունների նախագծերի մրցույթ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն հայագիտության ոլորտում կուտակված հրատապ խնդիրների լուծմանը:

ՀՈՒՖՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն առաջարկում է առավել ուշադրություն դարձնել հայագիտության հետևյալ ուղղություններին.

ա) Ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրներ.

բ) օսմանյան Թուրքիայի և Մերձավոր Արևելքի նորագույն պատմության հիմնահարցեր,

գ) Արցախի պատմական անցյալի հետազոտման և մշակութային արժեքների պահպանման խնդիրները,

դ) 21-րդ դարի հայագիտության մարտահրավերները,

ե) Հայոց պետականության զարգացման արդի փուլը,

Ֆինանսավորման ներկայացված ծրագրերին հատկացվում է 1 տարի ժամկետ:

Ներկայացվող ծրագրերում պետք է առանձնացվեն փուլեր՝ նշելով դրանց իրականացման ժամկետներն ու առաջադրանքները, ֆինանսավորման ծավալները՝ համապատասխան հաշվարկներով ու հիմնավորումներով:

Նախագիծը կարող են իրականացնել ինչպես մեկ գիտական խումբ՝ իր ղեկավարով և աշխատակիցներով, այնպես էլ անհատ գիտնականներ:

Մրցութային հանձնաժողովը աշխատանքները կսկսի հայտարարությունը տպագրելուց մեկ ամիս անց:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝

ք. Երևան, Բաղրամյան 24, 40 սենյակ, հեռախոս. 52 13 62

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ժպիտներ

☺

Վագոնի ուղեկցորդուհին հերթով մտնում է խցիկները և հարցնում.

- Ձեր մեջ արտասահմանցիներ կա՞ն:

Բոլոր վագոնախցերում ստանալով «ոչ» պատասխանը, վագոնով մեկ գոռում է.

- Կոշ, էստեղ մենակ մերոնք են, անջատիր օդափոխիչները:

☺

Կինը՝ ամուսնուն.

- Գիտես, թանկագինս, իմ ամբողջ կյանքի ընթացքում ընդամենը երկու իսկական տղամարդու եմ հանդիպել:
- Իսկ ո՞վ էր երկրորդը:
- Քո ինչին է պետք: Դու առաջինին էլ չգիտես:

☺

- Ինչպե՞ս համոզել կնոջը շարունակել ճանապարհն այն բանից հետո, երբ առջևով սև կատու է անցել:
- Իմ կարծիքով ավելի հեշտ է կատվին համոզել, որ հետ դառնա:

Գիտություն
Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ,
հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 26.06.2018 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА